



ԱՌՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՆԻՏՈՒԿՆԵՐ

ԱՌՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ
ՄԻՏՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հեղինակներ՝

Նաիրուհի Զրբաշյան
Սամվել Մանուկյան

Երևան, Դեկտեմբեր 2004

2003թ. օգոստոսին ՀՀ Կառավարությունը հաստատեց Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ), որը մեր երկրում աղքատության հաղթահարման գերակայությունները, ուղիներն ու նպատակակետերը նախանշող ամբողջական սոցիալ-տնտեսական ծրագիր է:

ԱՀՌԾ-ի իրականացման ընթացքն ու արդյունքները գնահատելու նպատակով Կառավարությունը 2004թ. նոյեմբերին ընդունեց «ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգը»¹ (այսուհետ՝ Հայեցակարգ):

ԱՀՌԾ-ն աղքատությունը դիտարկում է որպես բազմաչափ երևույթ, ուստի և կարևորում է աղքատության բոլոր դրսևորումների՝ թե նյութական և թե մարդկային աղքատության հաղթահարումը, ինչպես նաև Հազարամյակի Չարգացման Նպատակների (ՀՁՆ) իրականացումը մեր երկրում²: Հետևաբար ԱՀՌԾ մոնիտորինգի համակարգը ներառում է բազմաթիվ ցուցանիշներ, որոնք բնութագրում են նյութական և մարդկային աղքատությունն ու դրանց վրա ազդող հիմնական գործոնները: Այն սահմանում է ԱՀՌԾ մոնիտորինգի 177 ցուցանիշ, որոնք ըստ բովանդակության խմբավորված են վեց հիմնական խմբերի մեջ.

- i. աղքատության կրճատում և բարեկեցության աճ
- ii. կրթություն
- iii. առողջապահություն
- iv. հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային պայմաններ
- v. սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն
- vi. բնապահպանական կայուն զարգացում

Յուրաքանչյուր խմբում սահմանված են նպատակային ու գործոնային ցուցանիշներ: Ըստ որում, ii-iv խմբերում նպատակային ցուցանիշների մեջ կարևորված ու առանձնացված են համապատասխան ծառայությունների մատչելիության ցուցանիշները:

Հայեցակարգում որպես կարևոր հիմնախնդիր նշվում է մոնիտորինգային ցուցանիշների՝ ըստ երկրի տարածքների, գյուղ-քաղաք կտրվածքի և բնակչության հատուկ սոցիալ-ժողովրդագրական ու խոցելի խմբերի բաղադրամասնի³, ինչպես նաև ամփոփ համաթվերի մշակման անհրաժեշտությունը⁴ և այդպիսի որակյալ ու պարբերական տեղեկատվության անմատչելիությունը:

Նկատի ունենալով Հայեցակարգի այս պահանջները, ստորև ներկայացվում են մոնիտորինգային ցուցանիշների վերը նշված բացերը լրացնելու ուղղությամբ ՄԱԶԾ/Կառավարություն համատեղ իրականացվող «Սոցիալական մոնիտորինգի ու վերլուծության համակարգի ստեղծում» ծրագրի շրջանակներում մեր կողմից կատարված

¹ Ինտերնետային հասցեն՝ <http://www.prsp.am/indexarm.htm>

² Տես՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Երևան 2003, Էջ 43, ինտերնետային հասցեն՝ <http://www.prsp.am>

³ Տես՝ «ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ», կետ 24

⁴ Տես՝ «ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ», կետեր 33, 37, 39, 46, 49

աշխատանքների ամփոփ արդյունքները⁵, որոնք հիմնված են 2003թ. իրականացված «Մարդկային զարգացման ազգային հետազոտության» (այսուհետ՝ ՄՁԱՀ) տվյալների վերլուծության վրա: ՄՁԱՀ արդյունքների վերլուծության հիման վրա ստացված ցուցանիշները լրացնում են ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի ii-iv խմբերի նպատակային ցուցանիշները և բաղադրված են ըստ մարզային, գյուղ-քաղաք և սեռատարիքային խմբերի:

Հրապարակումը.

- ուղղված է սոցիալական ոլորտում վճիռներ ձևավորող և կայացնող, ինչպես նաև ռազմավարություններ մշակող մարմիններին:
- ներկայացնում է առողջապահության, կրթության ու հիմնական հանրային ծառայությունների՝ անվտանգ խմելու ջրի մատակարարման ու բնակարանային պայմանների մատչելիությունը նկարագրող ցուցանիշները մարզային, գյուղ-քաղաք ու սեռատարիքային կտրվածքներով:
- նկարագրում է նշված ոլորտներում գործունեության թիրախավորման և ռազմավարությունների մշակման հարցերում ներկայացված ցուցանիշների կիրառման մեթոդը:

Բաժին 1. Կրթության, առողջապահության ու հանրային ծառայությունների մատչելիության ցուցանիշներն ըստ Հայեցակարգի ու ՄՁԱՀ-ի արդյունքների և դրանց փոխադարձ կապը

1. Կրթության մատչելիության ցուցանիշները

Հայեցակարգում ԱՀՌԾ կրթության ոլորտի մոնիտորինգային նպատակային ցուցանիշները վերաբերում են կրթության մատչելիությանն ու որակին (տես՝ աղյուսակ 1): Ըստ որում, շեշտն այստեղ դրված է հիմնական դպրոցի վրա, սակայն զարգացումների վերլուծության ու կանխատեսման տեսանկյունից ենթադրվում է նաև համապատասխան տեղեկատվության առկայությունը կրթական բոլոր մակարդակների համար:

Աղյուսակ 1. ԱՀՌԾ մոնիտորինգի համակարգի հայեցակետի կրթական բաղադրիչի նպատակային ցուցանիշների ցանկը

Նպատակային ցուցանիշներ		Մասնամաս
B1	Կրթության մատչելիություն	
B1(i)	Ուսումնառության սպասվելիք տարիների թիվը (կյանքի 6-21 տարեկան ժամանակահատվածում), տարի	6 տարեկան երեխայի համար կրթական համակարգի տարբեր մակարդակներում ընդգրկված լինելու միջին հավանական տևողությունը՝ կյանքի 6-21 տարեկան ժամանակահատվածում (ենթադրելով, որ ապագայում պահպանվելու են տվյալ պահին բնորոշ ընդգրկվածության ցուցանիշները):
B1(ii)	Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում, տոկոս	Հիմնական դպրոցում (տարրական և միջին դպրոց՝ 1-8 (9)-րդ դասարաններ) համախառն ընդգրկվածությունը

⁵ ՀՀ բոլոր մարզերում մարդկային աղքատության, մարդկային զարգացման ու ՀՉՆ-երի ցուցանիշների մանրամասն վերլուծությունները, ՀՀ մարզերի իրավիճակային համեմատական վերլուծությունն ու քարտեզագրումները տես՝ «Հայաստանի սոցիալական միտումները» պարբերականի 4-6 համարներում:

	դպրոցում, տոկոս	հանրակրթության տվյալ մակարդակում ընդգրկվածների (անկախ տարիքից) և պաշտոնապես կրթական այդ մակարդակին անրագրված տարիքային խմբում առկա բնակչության ընդհանուր թվաքանակների հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ:
B1(iii)	Ավագ դպրոցում ընդգրկվածության համակենտրոնացման գործակից	Ըստ բարեկեցության աստիճանի բնակչության տարբեր խմբերի (քվանտիլների) անդամների ավագ դպրոցում փաստացի ընդգրկվածության և կատարյալ հավասարաչափ ընդգրկվածության միջև շեղման աստիճանը:
B2	Կրթության որակ	
B2(i)	Կրթության որակի գնահատման ներդրվելիք ազգային համակարգի արդյունքներ	---
B2(ii)	Հանրակրթության բնագավառի ծառայությունների որակից աշակերտների ծնողների բավարարվածության աստիճանը	Հանրակրթական դպրոցների աշակերտների ծնողների շրջանում անցկացվող հետազոտության արդյունքում հարցվողների կառուցվածքում «չատ լավ» և «լավ» գնահատական տված ծնողների մասնաբաժինը՝ տոկոսային արտահայտությամբ:
B2(iii)	Մասնավոր դասընթացներում ընդգրկվածության տարածվածության աստիճանը	Պետական հանրակրթական դպրոցների բուհեր դիմող տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակում այն շրջանավարտների մասնաբաժինը (տոկոս), որոնք մասնակցել են առարկայական անհատական կամ խմբակային լրացուցիչ մասնավոր պարապմունքների:

Աղբյուր՝ «ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ», էջ 12,44

«Մարդկային զարգացման ազգային հետազոտության» արդյունքների հիման վրա մեր կողմից հաշվարկվել է կրթության մատչելիությունը բնութագրող ցուցանիշների մի խումբ, որը լրացնում, ընդլայնում ու բաղդատում է Հայեցակարգի B1(ii) նպատակային ցուցանիշը, ինչպես նաև կարող է կիրառվել որպես հաշվարկային հիմք կամ մոտարկում՝ Հայեցակարգի կրթության մատչելիության B1(i)-B1(ii) ցուցանիշների համար (տես՝ աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՄՁԱՀ տվյալների հիման վրա հաշվարկված կրթության մատչելիության ցուցանիշները, դրանց բաղդատման մակարդակներն ու սահմանումները

	Ցուցանիշներ	Բաղդատման մակարդակներ	Սահմանում
1	Ձուտ ընդգրկվածությունը նախադպրոցական կրթական հաստատություններում	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ	Նախադպրոցական կրթական հաստատություններում ընդգրկված 3-6 տարեկանների հարաբերակցությունը 3-6 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
2	Համախառն ընդգրկվածությունը նախադպրոցական համակարգում	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Նախադպրոցական կրթական հաստատություններում ընդգրկվածների (անկախ տարիքից) հարաբերակցությունը 3-6 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
3	Ձուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում (հիմնական դպրոցի 1-3 դասարաններ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Տարրական դպրոցում (դպրոցի 1-3 դասարաններում) ընդգրկված 7-9 տարեկանների հարաբերակցությունը 7-9 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
4	Ձուտ ընգրկվածությունը հիմնական դպրոցում (1-8 դասարաններ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Հիմնական դպրոցում (դպրոցի 1-8 դասարաններում) ընդգրկված 7-14 տարեկանների հարաբերակցությունը 7-14 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %

5	15-17 տարեկանների զուտ ընդգրկվածությունը մասնագիտական կրթահամակարգում (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան, ԲՈՒՀ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Կրթահամակարգում (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան, ԲՈՒՀ) ընդգրկված 15-17 տարեկանների հարաբերակցությունը 15-17 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
6	Չուտ ընդգրկվածությունը՝ ավագ դպրոցում՝ (9-10 դասարաններ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Ավագ դպրոցում (9-10 դասարաններ) ընդգրկված 15-17 տարեկանների հարաբերակցությունը 15-17 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
7	Համախառն ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցում (1-10 դասարաններ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Միջնակարգ հանրակրթական դպրոցում ընդգրկվածների (անկախ տարիքից) հարաբերակցությունը 7-17 տարեկան բնակչության թվաքանակի նկատմամբ, %
8	Չուտ ընդգրկվածությունը մասնագիտական կրթողակներում (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան, ԲՈՒՀ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Մասնագիտական կրթահամակարգում (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան, ԲՈՒՀ) ընդգրկված 18-22 տարեկանների հարաբերակցությունը 18-22 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
9	Չուտ ընդգրկվածությունը միայն ԲՈՒՀ-ում	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	ԲՈՒՀ-ում ընդգրկված 18-22 տարեկանների հարաբերակցությունը 18-22 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
10	Համախառն ընդգրկվածությունը մասնագիտական կրթողակներում (քոլեջ, միջնակարգ մասնագիտական, ԲՈՒՀ)	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Մասնագիտական կրթահամակարգում (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան, ԲՈՒՀ) ընդգրկվածների (անկախ տարիքից) հարաբերակցությունը 18-22 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
11	Համախառն ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցում և մասնագիտական կրթողակներում	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ աղջիկ-տղա	Կրթական I, II և III մակարդակներում ընդգրկվածների (անկախ տարիքից) հարաբերակցությունը 7-22 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
12	Կրթահամակարգի անմատչելիությունը 3-6 տարեկանների համար	ՀՀ մարզեր	Նյութական ու ֆիզիկական անմատչելիության պատճառով կրթահամակարգում չընդգրկված 3-6 տարեկանների հարաբերակցությունը 3-6 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
13	Կրթահամակարգի անմատչելիությունը 7-14 տարեկանների համար	ՀՀ մարզեր	Նյութական ու ֆիզիկական անմատչելիության պատճառով կրթահամակարգում չընդգրկված 7-14 տարեկանների հարաբերակցությունը 7-14 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
14	Կրթահամակարգի անմատչելիությունը 15-17 տարեկանների համար	ՀՀ մարզեր	Նյութական ու ֆիզիկական անմատչելիության պատճառով կրթահամակարգում չընդգրկված 15-17 տարեկանների հարաբերակցությունը 15-17 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %
15	Կրթահամակարգի անմատչելիությունը 18-22 տարեկանների համար	ՀՀ մարզեր	Նյութական ու ֆիզիկական անմատչելիության պատճառով կրթահամակարգում չընդգրկված 18-22 տարեկանների հարաբերակցությունը 18-22 տարեկան առկա բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ, %

Ցուցանիշների թվային արժեքները բերված են բաժին 3-ի աղյուսակներ 3.1-3.6-ում:

2. Առողջապահության մատչելիության ցուցանիշները

«Հայեցակարգում» առողջապահության ոլորտի մոնիտորինգի նպատակային ցուցանիշները վերաբերում են առողջապահական ծառայությունների մատչելիությանը, մոր և մանկան առողջությանն ու տարափոխիկ հիվանդություններին (տես՝ աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ԱՀՌԾ մոնիտորինգի համակարգի հայեցակետի առողջապահական բաղադրիչի նպատակային ցուցանիշների ցանկը

Նպատակային ցուցանիշներ	Մահմանում
C1 Առողջապահական ծառայությունների մատչելիություն	
C1(i) Բժշկական ամբուլատոր պոլիկլինիկական օգնություն ցուցաբերող բուժկանխարգելիչ հիմնարկներ հաճախումների միջին տարեկան թիվը մեկ բնակչի հաշվով	Տարվա ընթացքում ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների և տնային այցերի (ներառյալ՝ շտապ օգնության բաժանմունքների և կայանների բժիշկների կանչերը) ընդհանուր թվի և առկա բնակչության ընդհանուր թվաքանակի հարաբերություն:
C1(ii) Հիվանդների կողմից առողջապահական հաստատություններ դիմելու հաճախականության բևեռացվածության գործակից	Ամենահարուստ (20 տոկոս) բնակչության և ամենաաղքատ (20 տոկոս) բնակչության առողջապահական հաստատություններ դիմելու հաճախականությունների հարաբերություն: Առողջապահական հաստատություններ դիմելու հաճախականությունը տվյալ քվանտիլային խմբում առողջապահական հաստատություններ դիմածների մասնաբաժինն է (տոկոս)՝ իրենց հիվանդ համարող անձանց ընդհանուր թվաքանակում:
C1(iii) Բուժօգնության առաջնային օղակ դիմորդներն աղքատների ընդհանուր թվաքանակում, տոկոս՝ առողջապահական հաստատություններ դիմած աղքատների ընդհանուր թվաքանակում	Բուժօգնության առաջնային օղակի հաստատություններ դիմած աղքատների մասնաբաժինը իրենց հիվանդ համարած և առողջապահական հաստատություններ դիմած աղքատ մարդկանց ընդհանուր թվաքանակում՝ տոկոսային արտահայտությամբ:
C2 Մոր և մանկան առողջություն	
C2(i) Մինչև հինգ տարեկան երեխաների մահացություն 1 000 կենդանածինների հաշվով	Մինչև հինգ տարեկան երեխաների մահացության գործակիցը արտացոլում է այն երևույթի հավանականությունը, որ նորածինը կմահանա մինչև հինգ տարեկան դառնալը, եթե պահպանվեն տվյալ պահի մահացության տարիքային գործակիցները: Հավանականությունն արտահայտվում է 1 000 կենդանածինների հաշվով ցուցանիշի տեսքով:
C2(ii) Մայրական մահացություն 100 000 կենդանածինների հաշվով (եռամյա միջին)	Հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում տվյալ տարվա ընթացքում մահացածների թվաքանակը՝ 100 000 կենդանածինների հաշվով: Եռամյա միջին ցուցանիշը սահմանվում է որպես վերջին երեք տարիներին (տվյալ տարին և դրան մախորդող երկու տարիները) հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում մահացածների թվաքանակ՝ 100 000 կենդանածինների հաշվով:
C3 Տարափոխիկ հիվանդություններ	
C3(i) Բնակչության հիվանդացությունը ակտիվ տուբերկուլոզով. դեպքերի թիվը 100 000 բնակչի հաշվով	Տվյալ տարում առաջին անգամ ախտորոշված և գրանցված հիվանդների ընդհանուր թվաքանակը՝ 100 000 բնակչի հաշվով: Հաշվարկի հիմք է հանդիսանում առկա բնակչության ընդհանուր թվաքանակը:
C3(ii) Մալարիայի առաջնակի հիվանդացություն. դեպքերի թիվը՝ 100000 բնակչի հաշվով	Տվյալ տարում առաջին անգամ ախտորոշված և գրանցված հիվանդների ընդհանուր թվաքանակը՝ 100 000 բնակչի հաշվով: Հաշվարկի հիմք է հանդիսանում առկա բնակչության ընդհանուր թվաքանակը:
C3(iii) Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով	Տվյալ տարում առաջին անգամ ախտորոշված և գրանցված հիվանդների ընդհանուր թվաքանակը՝ 100 000 բնակչի հաշվով: Հաշվարկի հիմք է հանդիսանում առկա բնակչության ընդհանուր թվաքանակը:
C3(iv) ՄԻԱՎ տարածվածության աստիճանը,	Տվյալ տարում հայտնաբերված վարակակիրների ընդհանուր

վարակալիքների թիվը՝ 100 000 բնակչի հաշվով	թվաքանակը՝ 100 000 բնակչի հաշվով: Հաշվարկի հիմք է հանդիսանում առկա բնակչության ընդհանուր թվաքանակը:
---	---

Աղբյուր՝ «ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ», էջ 14,49

C1 բաժնի ցուցանիշները դժվար կիրառելի են ոլորտում աղքատամետ քաղաքականությունների բաղդատված թիրախավորման և տարածքային կառավարման համար: ՄՁԱՀ արդյունքներն այս ոլորտում ուղղված են նշված բացը լրացնելուն և ամբողջացնում են առողջապահական ծառայությունների մատչելիության պատկերը տարածքային, քաղաք-գյուղ և սեռա-տարիքային կտրվածքներով: Դրանք բերված են աղյուսակ 4-ում: Աղյուսակ 4-ի 3,4 ցուցանիշները մոտարկող ցուցանիշներ կարող են հանդիսանալ «Հայեցակարգի» C2(i), C2(ii) ցուցանիշների համար:

Աղյուսակ 4. ՄՁԱՀ տվյալների հիման վրա հաշվարկված առողջապահական ծառայությունների մատչելիության ցուցանիշները, դրանց բաղդատման մակարդակներն ու սահմանումները

	Ցուցանիշներ	Բաղդատման մակարդակներ	Սահմանում
1	Անմատչելիության պատճառով բժշկի չդիմած բնակչություն, %	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ կին-տղամարդ երեխաներ տարեկան) (0-15	Անմատչելիության պատճառով բժշկի չդիմածների ներկայացվածությունը ՄՁԱՀ հարցմանը նախորդող 12 ամիսների ամիսների ընթացքում գոնե մեկ անգամ բժշկի կարիք գրագածների թվում, %: Ընդ որում, անմատչելիությունը այստեղ հասկացվում է որպես 3 բաղկացուցիչների միասնություն՝ ա/ նյութական անմատչելիություն (բժշկին դիմելու ծախսերը հոգալու անկարողություն), բ/ ֆիզիկական անմատչելիություն (մասնագետ բժշկի կամ առողջապահական հիմնարկի դժվար հասանելիություն, մեծ հեռավորություն), գ/ բժշկի դիմելու համար անհրաժեշտ ժամանակի անբավարարություն:
2	12 ամիսների ընթացքում բժշկական կանխարգելիչ բնություն անցած բնակչություն, %	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ կին-տղամարդ երեխաներ տարեկան) (7-15	ՄՁԱՀ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում բժշկական կանխարգելիչ ստուգում անցած բնակչության տեսակարար կշիռը հետազոտված ողջ բնակչության թվում, %
3	Բժշկական որակյալ անձնակազմի հսկողության տակ ծննդաբերած կանաց տեսակարար կշիռը վերջին 3 տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան կանանց թվում,%	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ	Բժշկական որակյալ անձնակազմի հսկողության տակ ծննդաբերած կանաց տեսակարար կշիռը վերջին 3 տարիների ընթացքում ծննդաբերած 15-49 տարեկան կանանց թվում, %: Ընդ որում, բժշկական որակյալ անձնակազմի հսկողության տակ ընթացած ծնունդները բժշկի կամ որակավորում ունեցող մանկաբարձի ընդունած ծնունդներն են:
4	Կյանքի առաջին տարում մահացածների տեսակարար կշիռը վերջին 3 տարվա ընթացքում ծնվածների մեջ,%	ՀՀ մարզեր	Կյանքի առաջին տարում մահացածների տեսակարար կշիռը վերջին 3 տարվա ընթացքում ծնվածների մեջ,%: (Մոտարկող ցուցանիշ)

Ցուցանիշների թվային արժեքները բերված են բաժին 3-ի աղյուսակներ 3.7-3.10-ում:

3. Հանրային ծառայությունների մատչելիության ցուցանիշները

«Հայեցակարգում» հանրային ծառայությունների ու բնակարանային պայմանների մոնիտորինգի նպատակային ցուցանիշները վերաբերում են ջրամատակարարման հասանելիությանն ու որակին, բնակարանային պայմաններին, հեռահաղորդակցության ու տեղեկատվության աղբյուրների հասանելիությանը (տես՝ աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Հիմնական հանրային ծառայությունների և բնակարանային պայմանների մոնիտորինգի նպատակային ցուցանիշների ցանկը

Նպատակային ցուցանիշներ		Սահմանում
D1	Ջրամատակարարման հասանելիություն և որակ	
D1(i)	Անվտանգ խմելու ջրի հաստատուն մատչելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը, %	Առկա բնակչության կառուցվածքում այն մարդկանց տեսակարար կշիռը, որոնց համար ջրամատակարարման հիմնական աղբյուր են հանդիսանում՝ 1.ջրմուղը բնակելի միավորում, 2.ջրմուղը շենքում, բայց ոչ բնակելի միավորում կամ 3.հանրային ջրմուղը, ինչպես նաև 4. այլ անվտանգ աղբյուրներ, որոնց ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը: Ջրի հաստատուն (կայուն) մատչելիությունը սահմանվում է որպես մեկ շնչի հաշվով օրական առնվազն 20 լ ջրի հասանելիություն՝ բնակարանից (կացարանից) մինչև 1 կմ հեռավորության վրա գտնվող ջրամատակարարման աղբյուրից:
D1(ii)	Կենտրոնացված ջրամատակարարման միջին օրական տևողություն, ժամ	Կենտրոնացված ջրամատակարարմամբ ապահովված տնային տնտեսություններին ջրամատակարարման միջին օրական տևողությունը՝ ժամ (հանրապետական միջին, գյուղական բնակավայրեր, քաղաքային բնակավայրեր): Կենտրոնացված ջրամատակարարմանը վերագրվում են ջրամատակարարման հետևյալ աղբյուրները՝ ջրմուղ բնակելի միավորում, ջրմուղ շենքում, բայց ոչ բնակելի միավորում, հանրային ջրմուղ:
D1(iii)	Աղբյուրից (և/կամ ջրհորից, գետից) օգտվող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, տոկոս	Աղբյուրից (և/կամ ջրհորից, գետից) օգտվող տնային տնտեսությունների թվաքանակի և տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ: Տնային տնտեսությունների հետազոտության հարցաշարում առանձնացվում են խմելու ջրի հասանելիության հետևյալ տարբերակները՝ 1. կենտրոնացված ջրամատակարարում, 2. սեփական ջրամատակարարման համակարգ, 3. աղբյուր, ջրհոր, 4. գետերի, լճերի ջուր, 5. բերովի ջուր, 6. այլք:
D1(iv)	Բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, տոկոս	Բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների թվաքանակի և տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ: Տնային տնտեսությունների հետազոտության հարցաշարում առանձնացվում են խմելու ջրի հասանելիության հետևյալ տարբերակները՝ 1. կենտրոնացված ջրամատակարարում, 2. սեփական ջրամատակարարման համակարգ, 3. աղբյուր, ջրհոր, 4. գետերի, լճերի ջուր, 5. բերովի ջուր, 6. այլք:
D2	Բնակարանային պայմաններ	
D2(i)	Հիմնական շինություններում գերբնակեցված բնակարաններում բնակվող բնակչության թվաքանակը 1 000 բնակչի հաշվով	1 սենյակում 2 և ավելի անդամներից բաղկացած ընտանիքների անդամների ընդհանուր թվաքանակի և առկա բնակչության ընդհանուր թվաքանակի (հազ. մարդ) հարաբերություն:
D2(ii)	Տնակներում կամ ժամանակավոր կացարաններում բնակվող բնակչության թվաքանակը 1 000 բնակչի հաշվով	Տնակներում կամ ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների անդամների ընդհանուր թվաքանակի և առկա բնակչության ընդհանուր թվաքանակի (հազ. մարդ) հարաբերություն:
D2(iii)	Բնակության համար վտանգավոր բնակարաններում բնակվող	3-րդ աստիճանի և բարձր վնասվածության աստիճան ունեցող, ինչպես նաև սողանքային և քարաթափերի ազդեցության գոտիներում

	ընտանիքների թվաքանակը 1000 բնակչի հաշվով	գտնվող բնակարաններում բնակվող ընտանիքների ընդհանուր թվաքանակի և առկա ընտանիքների ընդհանուր թվաքանակի (հազ. մարդ) հարաբերություն
D3	Հեռահաղորդակցության և տեղեկատվության (ինֆորմացիայի) առաջնային կարիքներ	
D3(i)	Հեռախոսություն 1 000 բնակչի հաշվով	Ֆիքսված հեռախոսակապի (հանրային համակցման հեռախոսային ցանց՝ ՀՀՀՅ) ծառայությունների բաժանորդների թվաքանակի և առկա բնակչության ընդհանուր թվաքանակի (հազ. մարդ) հարաբերություն:
D3(2)	Թվայնացված հեռահաղորդակցության աստիճանը, տեսակարար կշիռ ընդամենը արժեքներին	Հեռահաղորդակցության թվային կայանների ծառայություններից օգտվող բաժանորդների և հեռահաղորդակցության ծառայություններից օգտվող բաժանորդների ընդհանուր թվաքանակների հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ:
D3(iii)	Հեռուստահաղորդումների մատչելիություն, մեկից ավելի հեռուստաալիքի հասանելիություն ունեցող բնակչության տեսակարար կշիռը՝ տոկոս	Մեկից ավելի հեռուստաալիքի (հանրային, մասնավոր) հասանելիություն ունեցող բնակչության թվաքանակի և առկա բնակչության ընդհանուր թվաքանակի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ:

Աղբյուր՝ «ԱՀՌԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ», էջ 16,55

ՄՁԱՀ արդյունքների հիման վրա ստացված ցուցանիշները բնութագրում են անվտանգ ջրի ու կազարանների մատչելիությունը՝ տնային տնտեսությունների մակարդակով և բաղդատված են ըստ մարզային ու քաղաք-գյուղ կտրվածքի:

Աղյուսակ 6. ՄՁԱՀ տվյալների հիման վրա հաշվարկված անվտանգ ջրի ու կազարանների մատչելիության ցուցանիշները, դրանց բաղդատման մակարդակներն ու սահմանումները

	Ցուցանիշներ	Բաղդատման մակարդակներ	Սահմանում
1	Խմելու ջրի անվտանգ աղբյուրներից օգտվող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը հետագոտված տ/տ-ների թվում, %	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ	Այն տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, որոնց համար ջրամատակարարման հիմնական աղբյուր են հանդիսանում՝ ա/ջրմուղը բնակելի միավորում, ք/ջրմուղը շենքում, բայց ոչ բնակելի միավորում
2	Օրական մինչև 6 ժամ ջուր ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, %	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ	Կենտրոնացված ջրամատակարարմամբ ապահովված այն տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, որոնց ջրամատակարարման միջին օրական տևողությունը 6 ժամից պակաս է:
3	Ժամանակավոր կազարաններում բնակվող տ/տ-ներ, %	ՀՀ մարզեր քաղաք-գյուղ	Ժամանակավոր կազարաններում բնակվող տ/տ-ների տեսակարար կշիռը ՄՁԱՀ-ով հետագոտված տ/տ-ների թվում, %: Ժամանակավոր կազարանում բնակվող տ/տ ասելով այստեղ հասկացել ենք հանրակազարանում, պանսիանատում, հյուրանոցում, վազոն/տնակում, նկուղում, ավտոտնակում առանց սեփականության իրավունքի (իրենց տ/տ-յան սեփականությունը չհանդիսացող կազարաններում) բնակվող տ/տ-ները:

Ցուցանիշների թվային արժեքները բերված են բաժին 3-ի աղյուսակ 3.11- 3.13-ում:

Բաժին 2. Աղքատամետ քաղաքականությունների ներդրությանը և միջնարգային թիրախավորման ու գերակայությունների որոշման համար ՄՁԱՀ ցուցանիշների կիրառման հնարավորությունները

1. Ցուցանիշների ներկայացման ձևը

Բաժին 3-ում ներկայացված են ՄՁԱՀ տվյալների հիման վրա հաշվարկված կրթության, առողջապահության ու հիմնական հանրային ծառայությունների մատչելիության վերը բերված ցուցանիշների արժեքները՝ աղյուսակների տեսքով: Յուրաքանչյուր աղյուսակում տրված է որոշակի ոլորտի վերը բերված ցուցանիշների արժեքների բաշխումները ըստ հետևյալ կտրվածքների.

- ՀՀ մարզերը. ցուցանիշի փոփոխականության դիտարկման առաջնային կտրվածք,
- Բնակավայրի տիպ (քաղաք, գյուղ). ցուցանիշի փոփոխականության դիտարկման առաջին օժանդակ կտրվածք,
- Մեռական և/կամ տարիքային խումբ. որոշակի ցուցանիշների համար, նույն աղյուսակում տրված է նաև դրանց բաշխումն ըստ սեռի և/կամ տարիքային խմբերի որը ցուցանիշի փոփոխականության դիտարկման երկրորդ օժանդակ կտրվածքն է:

Աղյուսակներին առանձին տողով կցված են.

- Համապատասխան ցուցանիշի հանրապետական չհամակշռված միջին արժեքը, որը հաշվարկված է ըստ ցուցանիշի մարզային միջին արժեքների:

Այդ ցուցանիշն ավելի գերադասելի է համարվել ըստ բնակչության թվաքանակի համակշռված միջինից, քանի որ երկրորդ դեպքում համակշռված միջինը շեղված կլիներ դեպի Երևան քաղաքի գնահատականը, իսկ տարածքային ռազմավարական թիրախավորման ժամանակ առավել գերադասելի է քննել մարզերի տարբերությունները՝ դրանք դիտարկելով որպես համահավասար տարածքային միավորներ:

Ցուցանիշի առաջնային և յուրաքանչյուր օժանդակ կտրվածքի համար տրված է նաև դրա՝

- Մարզային առավելագույն և նվազագույն արժեքների տարբերությունը,
- Ստանդարտ շեղումը:

Աղյուսակային տվյալները ցույց են տալիս՝

- մի կողմից՝ *ցուցանիշի արժեքը* ըստ բաղադատման մակարդակների,
- մյուս կողմից՝ *ցուցանիշի շեղումը* հանրապետական միջին արժեքից բաղադատման յուրաքանչյուր մակարդակում:

Ռ-ազմավարական կառավարման համար առավել օպերացիոնալ նշանակություն ունեն բաղադատման յուրաքանչյուր մակարդակում ցուցանիշի շեղման աստիճանները հանրապետական միջինից: Այդ պատճառով, ներկայացվող տվյալներն առավել դյուրօգտագործելի դարձնելու համար այն աղյուսակներում, որտեղ ներկայացված են այդ շեղումները, նրանց հետ մեկտեղ տրված են նաև շեղման աստիճանի և ուղղության մեծնմանիկ պատկերումները մեկ կամ մի քանի ↑ կամ ↓ սլաքների միջոցով:

↓ սլաքները կցված են այն շեղումներին, որոնք համապատասխանում են հանրապետական միջինի նկատմամբ ցուցանիշի «վատ» արժեքներին: Ըստ որում, սլաքների քանակի ավելացումը համապատասխանում է առավել վատթար վիճակին:

↑ սլաքները համապատասխանում են այն շեղումներին, որոնք համապատասխանում են հանրապետական միջինի նկատմամբ ցուցանիշի «լավ» արժեքներին: Ըստ որում, սլաքների քանակի ավելացումը համապատասխանում է առավել լավ վիճակին:

= նշանը առկա է այն ցուցանիշների վանդակներում, որոնց շեղումները հանրապետական միջինի նկատմամբ փոքր են:

Շեղումների յուրաքանչյուր աղյուսակի կամ աղյուսակների խմբի կցված են դրանց մենեժմոնիկ սանդղակները, որոնք թույլ են տալիս արագորեն և հեշտությամբ ընկալել յուրաքանչյուր աղյուսակի տվյալները:

Օգտագործված է մենեժմոնիկ երկու սանդղակ. առաջինը այն ցուցանիշների համար, որոնք ունեն մեծ ցրվածություն, իսկ երկրորդն այն ցուցանիշների համար, որոնք չնայած ունեն փոքր ցրվածություն, սակայն այդ փոքր ցրվածության սահմաններում ցուցանիշների տարբերություններն, այնուամենայնիվ, էական են իրավիճակի բովանդակության տեսակետից:

Աղյուսակ 7. Ցուցանիշների՝ հանրապետական միջինից ունեցած շեղումները ներկայացնող աղյուսակներում մենեժմոնիկ նշանակումների համար կիրառված սանդղակները.

Հիմնական սանդղակ	
Շեղման դիսպարզորը, %	Նշանակում
20.0 < D <= 40.0	↑↑↑↑
10.0 < D <= 20.0	↑↑↑
5.0 < D <= 10.0	↑↑
2.5 < D <= 5.0	↑
-2.5 < D <= 2.5	=
-2.5 < D <= - 5.0	↓
-5.0 < D <= -10.0	↓↓
-10.0 < D <= -20.0	↓↓↓
-20.0 < D <= -40.0	↓↓↓↓

Այն դեպքում, երբ դրական շեղումը նշանակում է ցուցանիշի վատացում, ապա սանդղակում սլաքների ուղղությունները փոխվում են:

Փոքր շեղումների սանդղակ	
Շեղման դիսպարզորը, %	Նշանակում
10.0 < D <= 15.0	↑↑↑↑
5.0 < D <= 10.0	↑↑↑
2.5 < D <= 5.0	↑↑
0.5 < D <= 2.5	↑
-0.5 < D <= 0.5	=
-0.5 < D <= -2.5	↓
-2.5 < D <= - 5.0	↓↓
-5.0 < D <= -10.0	↓↓↓
-10.0 < D <= -15.0	↓↓↓↓

Այն դեպքում, երբ դրական շեղումը նշանակում է ցուցանիշի վատացում, ապա սանդղակում սլաքների ուղղությունները փոխվում են:

2. Աղյուսակային տվյալների կիրառումը

Աղյուսակային տվյալները կարող են կիրառվել վերը նշված ոլորտներում ռազմավարությունների ինչպես միջնարգային և ներոլորտային, այնպես էլ կոմպլեքսային թիրախավորման համար:

Միջնարգային համեմատությունները կատարվում են ըստ աղյուսակների համապատասխան տողերի տվյալների:

Ներոլորտային համեմատությունները կատարվում են ըստ աղյուսակների համապատասխան սյուների տվյալների:

Կոմպլեքսային թիրախավորումը կատարվում է բոլոր աղյուսակների բոլոր տվյալների մակարդակների և շեղումների փորձագիտական գերակայությունների սահմանման և հաշվառման միջոցով:

Ընդհանուր առմամբ բարելավման ենթակա կարևորագույն ոլորտները նրանք են, որոնց շեղումների աղյուսակներում գերակշռում են մեծ քանակով ↓ սլաքները: Այդ վանդակները մատնանշում են այն կոնկրետ թիրախները, որոնք բարելավման կարիք ունեն:

Սակայն կոնկրետ կիրառությունների ժամանակ ֆորմալ մոտեցումը կարող է մոդիֆիկացվել ցուցանիշների արժեքների շեղումներին փորձագիտական գերակայությունների վերագրման միջոցով, որը որոշումներ ձևավորող և կայացնող մարմինների փորձագետների խնդիրն է:

Օրինակ՝ Փորձագիտական գերակայությունների խնդիրն է սահմանել, թե երկու ցուցանիշների միջին արժեքներից ո՞րն է համապատասխանում առավել բարենպաստ իրավիճակին:

Բաժին 3. ՄՁԱՀ-ից ստացված կրթության, առողջապահության ու հանրային ծառայությունների մատչելիության ցուցանիշների աղյուսակները

Աղյուսակներ 1.1 – 1.5. -ի մենմոնիկ սանդղակը:

Հիմնական սանդղակ	
Շեղման դիապազոնը	Նշանակում
$20.0 < D \leq 40.0$	↑↑↑↑
$10.0 < D \leq 20.0$	↑↑↑
$5.0 < D \leq 10.0$	↑↑
$2.5 < D \leq 5.0$	↑
$-2.5 < D \leq 2.5$	=
$-2.5 < D \leq -5.0$	↓
$-5.0 < D \leq -10.0$	↓↓
$-10.0 < D \leq -20.0$	↓↓↓
$-20.0 < D \leq -40.0$	↓↓↓↓

Աղյուսակ 3.1. 3-6 տարեկան բնակչության զուտ ընդգրկվածությունը նախադպրոցական կրթական հաստատություններում, %

	3-6 տարեկան ների զուտ ընդգրկ- վածությունը նախա- դպրոցական համակարգում,% 3-6 տարեկան բնակչության թվում	3-6 տարեկան քաղաքային բնակ- չության զուտ ընդգրկվածությունը ,%	3-6 տարեկան գյուղական բնակ- չության զուտ ընդգրկվածությունը,%
Երևան	50.3	50.3	--
Արագածոտն	10.2	31.8	6.4
Կոտայք	15.5	25.4	4.8
Գեղարքունիք	10.2	15.6	8.2
Տավուշ	27.9	64.0	16.5
Լոռի	22.1	31.4	7.0
Շիրակ	37.7	40.0	33.3
Արարատ	18.1	43.8	6.8
Արմավիր	29.8	56.0	9.4
Սյունիք	40.6	54.7	23.3
Վայոց Ձոր	22.2	52.8	8.6
Միջին արժեքը <i>Արժեքների փոփոխության միջակայքը</i>	25.9		
<i>Ստանդարտ շեղումը</i>	40.1	48.4	28.5
	12.9	14.9	9.2

Աղյուսակ 3.1_1. 3-6 տարեկան բնակչության՝ նախադպրոցական կրթահամակարգում զուտ ընդգրկվածության շեղումները հանրապետական միջինի նկատմամբ և այդ շեղումների մենտոնիկ պատկերը⁶

	3-6 տարեկանների զուտ ընդգրկվածությունը նախադպրոցական համակարգում,% մարզի 3-6 տարեկան բնակչության թվում	3-6 տարեկան քաղաքային բնակչության զուտ ընդգրկվածությունը ,%	3-6 տարեկան գյուղական բնակչության զուտ ընդգրկվածությունը,%
Երևան	↑↑↑↑ 24.4	↑↑↑↑ 24.4	
Արագածոտն	↓↓↓ -15.7	↑↑ 5.9	↓↓↓ -19.5
Կոտայք	↓↓↓ -10.4	= -0.5	↓↓↓↓ -21.1
Գեղարքունիք	↓↓↓ -15.7	↓↓↓ -10.3	↓↓↓ -17.7
Տավուշ	= 2.0	↑↑↑↑ 38.1	↓↓ -9.4
Լոռի	↓ -3.8	↑↑ 5.5	↓↓↓ -18.9
Շիրակ	↑↑↑ 11.8	↑↑↑ 14.1	↑↑ 7.4
Արարատ	↓↓ -7.8	↑↑↑ 17.9	↓↓↓ -19.1
Արմավիր	↑ 3.9	↑↑↑↑ 30.1	↓↓↓ -16.5
Սյունիք	↑↑↑ 14.7	↑↑↑↑ 28.8	↓ -2.6
Վայոց Ձոր	↓ -3.7	↑↑↑↑ 26.9	↓↓↓ -17.3

Կիրառված է մենտոնիկ նշանակումների հիմնական սանդղակը

